

1 MAR 2010


ԱՍԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՄԵՆԻ ՏԱՆՆ  
ԿԵԼԻԿՈՑ



ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



361  
4-15

52 JUL 85

### ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԻՒՆ

Կաթողիկոսութեանս սահմաններուն մէջ մեզ համար ազգային կենսական խնդիրներէն մէկն է մեր Դպրոցներուն մատակարարութիւնը, որ մասնաւորապէս երկու տարիէ ի վեր դժուարացած է անգործութեան և տնտեսական տագնապի երեսէն. ասոր վրայ աւելցաւ նըւազումը Բարեգործականի նպաստներուն, և վերջերս ալ՝ Պետական նպաստներու կախակայումը:

Հայ ժողովուրդը, իր բնաշխարհին մէջ, իր իսկ դրամով կը պահէր իր ազգային դպրոցները, և կը պահէր նախանձելի վիճակի մը մէջ:

Սիւրիա, այս մեր նոր հայրենիքին մէջ, մեր ժողովուրդը դարձեալ կեանք տուաւ իր դպրոցներուն, իր Մայրենի եկեղեցւոյ կողքին, թէև շատ չափաւոր պայմաններու մէջ. ընդարձակ, քարակիր փառաւոր շէնքերու տեղ՝ զիջանելով փայտակերտ խախուտ շէնքերու, և կտրելով իր հացէն, իր կարողութեան



63460-67

<< Ազգային գրադարան



NL0219882

չափով, տուաւ իր զաւակներուն մտաւոր սնունդին համար: Այսչափը, սակայն, չբաւեց և չի՛ բաւեր մեր դպրոցներու պէտքին, որոնց Հոգաբարձութիւնները ամիսներով չեն կրնար վճարել ուսուցիչներուն ամսական վարձքերը. ուսուցիչներուն, որոնց ապրուստը կախուած է միայն իրենց այդ համեստ ամսականներէն:

Պետական նպաստները կախակայուեցան, տնտեսական տագնապի պատճառանքով. թէև մենք կրկին դիմումներով շեշտեցինք կառավարական շրջանակներու մէջ այս նպաստներուն վերահաստատութեան անառարկելի պէտքը:

Բարեգործականը ամփոփեց իր նըպաստներուն քանակը, որովհետև տընտեսական տագնապի հետեւանքով կաբեւոր միասնեբու ենթարկուեցան անոր ալ դրամական գործառնութիւնները:

Ի՞նչ պէտք է ընել, ուրեմն, որ մեր դպրոցները կարելի եղածին չափ շուտով և բոլորովին ազատին իրենց տնտեսական տագնապէն:

Մեր համոզումով երկու միջոց կայ, իբրև դարման.

Առաջին.— Ծնողներ առանց վերապահութեան տալու են իրենց զաւակներուն կրթութեան համար. այսինքն սրտանց տալու են այնչափ ո՛րչափ կրնան: Պէտք է որ փնտռեն աժան դպրոց, ձրի դըպրոց, օտար դպրոց:

Այս կէտը այնչափ կարեւոր է՝ որ աւելորդ է ուէէ խօսք և բացատրութիւն այդ մասին:

Հայ մանուկներու նախակրթութիւնը Հայ Դպրոցի մէջ, և Հայ ծնողներու պարտքը իրենց ազգային դպրոցներու հանդէպ, իրենց զաւակներուն հայացի կրթութեան և դաստիարակութեան համար: Այս պէտք է ըլլայ նշանաբանը Հայ ծնողներու:

Հայ ծնողներ պէտք է տան անտըրաւունջ, առանց-առարկութեան ինչ որ կը ներէ իրենց կարողութիւնը:

Երկրորդ.— Բարեգործականի նպաստը: Ահա՛ մեր ազգային ապահով աղբիւրներէն մէկն ալ:

Բայց Բարեգործականը ա՛յնչափ կըր-  
նայ տալ մեր դպրոցներուն ո՛րչափ մենք  
ամէն տարի կանոնաւորապէս կրնանք  
տալ իրեն մեր անդամական տուրքով :

Եթէ մենք մեկ կու տանք Բարեգոր-  
ծականի, ան մեզի կու տայ երեք. եթէ  
մենք տասը կու տանք, ան մեզի կու տայ  
երեսուն, վաքսուն, հարիւր :

Ոմանք այնպէս կը կարծեն թէ Բա-  
րեգործականը դրամ ունի, բայց չի տար :  
Ասիկա շատ չիտակ է. այո՛ Բարեգոր-  
ծականը շատ դրամ ունի, բայց ո՛չ թէ  
չի տար մեր դպրոցներուն, այլ չի կրնար  
տալ. որովհետեւ այդ շատ դրամները մաս-  
նաւոր պայմաններով և կտակներով  
յանձնուած են Բարեգործականի՝ որոշեալ  
նպատակներու գործածելու համար.  
հետեւաբար, Բարեգործականը չի կրնար  
իր ուզած կերպով գործածել այդ շատերը :

Աւելի լուսաբանութեան համար յա-  
ռաջ կը բերենք տեղեկագրի մը սա՛ հա-  
տուածը .

— Տեսնըվեց Հիմնադրամներ (Անգլ.

ուկի 105764) գործադրութեան պիտի դը-  
րուին, երբոր պայմանաժամերը, կենսա-  
բուսակներ եւ այլ մասնաւոր յսկացում-  
ներ վերջ գտնեն :

Ինը Հիմնադրամներ Հայաստանի յա-  
տուկ են :

Երեք հիմնադրամներ կը բաղկանան  
կալուածներէ որ գրաւուած են ըստ յա-  
կացումի :

Մեկ հիմնադրամ յօգուտ Հեղինակութի  
Վարժարանին :

Վերջապէս 8747 Անգլ. ոսկի արժեքով  
քանի մը փոքր Հիմնադրամներ, որոնցմէ  
յօգուտ որբերու բաժին կ'եղայ տարեկան  
523 Անգլ. ոսկի եւ կրթական ձեռնարկնե-  
րու 77 Անգլ. ոսկի. իսկ ոչինչ եղբայրա-  
կան օգնութեան եւ այլ նպատակներու  
համար :»

Ձերմապէս կը յանձնարարենք մեր  
սիրելի ժողովուրդին, որ այս յստակ  
բացատրութիւնները սերտէ և իւրացնէ,  
և ըստ այնմ գատողութիւն և գիտողու-  
թիւն ընէ Բարեգործականի մասին, և

չըսէ, «Բարեգործականը շատ դրամ ունի, թող տայ» այս կամ այն պէտքի և նպատակի համար:

Կը մնայ, ուրեմն, մեզի, Սիրելի ժողովուրդ Հայոց, որ գիտակցութեամբ և անձնուիրօրէն կատարենք մեր պարտականութիւնը հանդէպ Բարեգործականի, և զայն հասցընենք այնպիսի վիճակի մը որ կարող ըլլայ պէտք եղածին չափ նւապատել մեր դպրոցներուն:

Այս է միակ միջոցը, և այս միջոցը իրագործելու համար բաւական է որ իւրաքանչիւր դրամ վաստակող Հայ, այր և կին, անդամ գրուի Բարեգործականին, նոյն իսկ անդամագրութեան նուազագոյն տուրքը տալով, և ասոր արդիւնքը կ'ըլլայ հրաշալի: Վասն զի Բարեգործականը իր անդամներուն տուրքերէն է որ նպաստներ կը յատկացնէ մեր դպրոցներուն: Իր ունեցած հիմնադրամներուն մէջ, ինչպէս որ տեսանք վերև, դպրոցներու յատուկ հիմնադրամ չկայ:

Բարեգործականը Հայ ժողովուրդին

գանձարանն է: Եւ ժողովուրդը սիրով և սրտով բուրուելու է ասոր շուրջ և տալու է, որպէս զի տրուի իրեն բազմապատիկ չափով:

Նեղ ժամանակներու մէջ է որ ժողովուրդ մը կրնայ ցոյց տալ իր կորովը և կարողութիւնը: Տոյց տանք այդ կորովն ու կարողութիւնը կազմակերպուելով Բարեգործականի հետ, և մեր քիչը բերելով քով քովի Բարեգործականի գանձարանին մէջ: Կաթիլները, կ'ըսեն, գետ կը կազմեն և գետերն ալ՝ ծով:

Մեր ժողովուրդը պէտք է որ իր ներքին փոքր ոյժերը ժողվէ, միացնէ, և զօրացնէ Բարեգործականը:

Մենք իբրև Հայ, ազգովին ջանալու ենք միանալ մեր բարեսիրական և կըրթական ձեռնարկներուն շուրջ, և իբրև երաշխիք մեր հասկցողութեան և իբրև գրաւական մեր գործակցութեան, աշխատելու ենք որ մեր միութիւնը իրական ըլլայ, ապրի և տեւէ գործնականապէս:

եթէ Հայ ժողովուրդը գիտնայ և գը-  
նահատէ Միութեան արժէքը, վայրկեան  
մը չի կորսնցներ անդամագրուելու հա-  
մար Բարեգործականին:

Բարեգործականը հիմնուեցաւ 1906  
Ապրիլ 15ին, Զատիկին, խորհրդաւոր գու-  
զադիպութեամբ մը, կարծես Հայ ժողո-  
վուրդին առակաւոր անմիաբանութեան  
վերջ տալու և նոր ոգի մը յարուցանե-  
լու համար անոր ներսը՝ Փրկչին Յարու-  
թեան խորհուրդին հետ:

Դժբախտաբար դեռ շատեր, շատեր  
չեն գիտեր Հ. Բ. Ը. Միութեան նշա-  
նակութիւնը և անոր պահուած ապագան:

Բարեգործականը 1906—1932, քսան  
վեց տարիներու ընթացքին, 727,188  
Անգլ. ոսկի տուած է այլևայլ նպատակ-  
ներու:

Իսկ օգնութեան գործին տուած է.

1930-ին	51,171	Անգլ. ոսկի
1931-ին	63,573	» »
1932-ին	60,710	» »
	<hr/>	
	175,454	

գարձեալ՝ 1921-1932 միայն Հայաստանի  
վերաշինութեան, մշակոյթին և ներգաղ-  
թին համար տուած է 172,275 Անգլ. ոսկի:  
Ըսել է 347,729 Անգլ. ոսկիի վիթխարի  
գումար մը:

Սիրելի ժողովուրդ Հայոց, այս գու-  
մարը քու զաւակներուդ մէկ փոքր մա-  
սին տուածն է:

Ասոնք ինքնին աղաղակող, պերճա-  
խօս թիւեր են, որ կրնան զգաստացնել  
ամէնէն անտարբեր, ամէնէն բծախնդիր,  
ամէնէն դժուարահաճ Հայերն իսկ, սո՛-  
թեւադրանքը ընելով անոնց. եթէ քանի  
մը հազար Հայերու միութեամբ այսչափ  
գումարներ հաւաքուած և գործածուած  
են ազգասիրական նպատակներու, իսկ  
եթէ ամէնէն քիչը կէս միլիոն Հայեր ան-  
դամագրուած ըլլային Բարեգործականի,  
կանոնաւորապէս տալով իրեն տարեկան  
անդամատուրքը, ի՞նչ պիտի ըլլայ այս-  
պիսի Միութեան մը արդիւնքը:

Խեղքը գլուխը ամէն մէկ Հայ կրնայ  
տալ այս հարցումին պատասխանը:

Այո՛, Սիրելի ժողովուրդ Հայոց, դուն կրնաս տալ այդ պատասխանը և պէտք է որ տաս իբրև անդամ միանալով Բարեգործականին:

Մեր յոյսը դնելու չենք արտաքին նպաստներու վրայ. որովհետեւ անոնք տեւական չեն: Բարեգործականը կրնայ հասնիլ մեր բոլոր ազգային պէտքերուն՝ եթէ բոլոր Հայեր նետեն իրենց լուծման մեր ազգային այդ մեծ և ապահով գանձարանին մէջ:

Ուրեմն բոլորուի՛նք անոր շուրջ. տա՛նք անոր մեր լուծմաները, վստահի՛նք անոր մեր կտակները, ուժովցնենք զայն, որպէս զի ան կարենայ հասնիլ մեր դրպորոցական և այլ պէտքերուն:

Ըսինք թէ 1906 Ապրիլ 15-ին հիմնուեցաւ Միութիւնը քանի մը պատուական Հայերու հասկցողութեամբ և ջանքերով: Այս տարի Զատիկը կը հանդիպի Ապրիլ 1-ին: Արդ՝ այս Զատիկ առթիւ կոչ կ'ուղղենք մեր սիրելի ժողովրդի զաւակներուն՝ որպէս զի, իբրեւ յիշատակ Միու-

րեան Ձեզ սարեգարձին, անդամագրուին Միութեան եւ իրենց քիչով նպաստեն շատ սեղծելով՝ ի նպաստ մեր դպրոցներուն եւ մեր ազգային բոլոր պէտքերուն:

Կ'արժէ որ այս քսանութեամբայ եւրիտասարդը, Հայ ժողովրդի միութեան իրագործումը խորհրդանշող Բարեգործական Ընկերութիւնը, քաջալերուի և զօրանայ բոլոր Հայերու գիտակցութեամբ, համոզումով և հաւատքով:

Բարեգործականը իւր դրամական ոյժէն և արժէքէն զատ, իրագործումն է նաև անխտրականութեան՝ դասակարգի և կրօնական համոզումներու:

Բարեգործականի մէջ չկայ ազնուականի և շինականի խտիր. չկայ եկեղեցիներու տարբերութեան խնդիր, չկայ մըտաւորականի և արհեստաւորի խտրանք, չկայ նաեւ եկեղեցականի և աշխարհականի դիրք:

Բարեգործականի շուրջ հայութիւնն է որ կը բոլորուի և ո՛չ թէ անոր դասակարգերն ու տիտղոսները:

Պէտք է գուրգուրալ այս կազմակերպութեան վրայ որ հայութեան ամբողջական միութեան տեսիլը (*vision*) իրագործուի և ոչ մէկ Հայ դուրս մնայ Միութեան ոսկի օղակին մէջէն:

Պէտք է գոհութիւն տալ Աստուծոյ որ այսպիսի կազմակերպութիւն մը 28 տարիներու արդիւնաւոր իրականութիւնը եղաւ, և Հայ ժողովուրդին նիհար միջոցները զօրացնող և օգտակարապէս գործածող ընկերութիւն մը:

Միութեան 28րդ տարեգարձը թո՛ղ ըլլայ նոր շարժումի մը թուականը մեր ժողովուրդին մէջ, զօրացնելու համար Բարեգործականը:

Թող ըլլայ նաեւ արթնութեան շրջան մը Սփիւռքի հայութեան՝ գնահատելու համար Բարեգործականի նման հաստատութեան մը իրական և գրական նշանակութիւնը, որպէս զի այդ հաստատութեան մէջ համագրուին Հայուն նիւթական հնարաւորութիւնները, նոյն ինքն հայութեան ներքին պէտքերուն ինքնա-

վար տնտեսութեան բաւելու չափ:

Բարեգործականը իր բարոյական գեղեցկութիւնն ալ ունի, ներշնչելով մեզի գործակցութեան ոգի, իրարու վստահելու քաջութիւն, զիրար գործնականապէս սիրելու առիթ, և վերջապէս Հայք չեն միաբանիր անարգար վճռին հերքման ջախջախիչ և փառաւոր ապացոյցը:

Ուրեմն, Միբելի ժողովուրդ Հայոց, 1934-ի Զատիկը քեզ համար թող ըլլայ նաեւ տօն մը Միութեան մեր Փրկչին Սուրբ Յարութեան Տօնախմբութեան հետ:

Միութիւնը ոյժ մըն է անընկճելի:

Միութիւնը ամուր պարիսպ մըն է անխորտակելի:

Միութիւնը բարոյական և նիւթական ոյժերու գանձարանն է անսպառելի:

Անգամագրուեցէ՛ք Հ. Բ. Ը. Միութեան:

Եղբայրական անկեղծ սիրով և ազգասիրական ամէնէն ազնիւ ներշնչումով միացէ՛ք Հ. Բ. Ը. Միութեան:

Երբ մէկ կողմէն հայրական այս յորգորները կ'ուզղենք ձեզ, Հայութեան

43. 136

սիրելի Զաւակներ, միւս կողմէն կը  
խնդրենք Լուսոյ Հօրմէն, որ աղբիւրն  
է բոլոր բարի տուրքերու և կատարեալ  
պարգեւներու, թող առատացնէ իր ան-  
բաւ օրհնութիւնները ձեր վրայ, Բարե-  
գործականի բարգաւաճման համար աշ-  
խատողներուն վրայ, անոր բոլոր ան-  
գամներուն վրայ:

Օրհնեա՛լ ըլլայ անոր Հիմնադիրներէն  
հանգուցեալներուն յիշատակը և ողջե-  
րուն արեւը:

Ապրի՛ Հայ ժողովուրդը, Սիրոյ, Խա-  
ղաղութեան և Միութեան մէջ:

Կ'ուզղենք ձեզի, Սիրելի ժողովուրդ  
Հայոց, մեր հայրական սիրոյ ողջոյնները,  
որպէս զի ողջ ըլլաք և ողջ պահէք Հ.  
Բ. Ը. Միութիւնը:

Աղօթարար

ՍԱՀԱԿ Բ. ԿՅՂԱ. ԿԻԼԻԿԻՈՅ

ՆՈՐԻՆ ԱԹՈՂԱԿՈՅ ԲԱԲԳԷՆ ԿՅՂԱ.

1934 Փետր. 3, Շք.

Տօն Իսահակայ Պարբէի Հայրապետի մերոյ

Կարողիկոսարան

Անթիլիաս - Լիբանան